

ԳԵՎՈՐԳ ԻՐԱՅԵԼՅԱՆ

ԴԵՌԱՅԱՍՆԵՐԻ ԵՎ ԱՆՉԱՓԱՅԱՍՆԵՐԻ ՆԿԱՏԱՍԲ
ԿԱՏԱՐՎՈՂ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԻԿՏԻՄՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ

Ավելորդ չենք համարում ևս մեկ անգամ հիշատակելու, որ սեռական հանցագործությունները քայքայիչ ազդեցություն են ունենում հատկապես աճող սերնդի ֆիզիկական, հոգեսեռական, բարոյական զարգացման վրա, անջնջելի հետք են թողնում սեռական ոտնձգության ենթարկված անձի հոգեկան աշխարհի ու ողջ հետագա կյանքի վրա: Ուստի հասարակական ահազանացող հնչեղություն և նշանակություն է ձեռք բերում դեռահասների, անչափահասների նկատմամբ սեռական ոտնձգությունների վիկտիմոլոգիական կանխարգելման հիմնախնդիրը: Վիկտիմոլոգիական կանխարգելումն արդյունավետ կազմակերպելու համար առաջին հերթին պետք է հետազոտել քննարկվող կատեգորիայի տուժողների՝ տարիքով պայմանավորված անձնային առանձնահատկությունները, որոնք պայմանավորում են նրանց նկատմամբ սեռական հանցագործությունների կատարումը:

Սեռական հանցագործություններից դեռահաս և անչափահաս տուժողներին բնութագրող բացասական գծերից են անառակությունը, սեռական հետաքրքրասիրությունը, շահադիտական հետաքրքրվածությունը, դյուրահավատությունը, անքննադատականությունը, այլասերման փաստը թաքցնելը¹, մինչև հանցավոր ոտնձգությունը սեռական կապերի առկայությունը² և այլն: Սակայն թվարկված ոչ բոլոր հատկությունների բացասական դրակման հետ կարելի է համաձայնել: Այսպես, սեռական հետաքրքրասիրությունը և դյուրահավատությունը նշված տարիքի անձանց հոգեբանական առանձնահատկություններից են, և դրանք անհրաժեշտ է քննարկել վիկտիմ վարքի համատեքստում³: Մեր կարծիքով, որպես բացասական հատկություն կարելի է դիտել անառողջ սեռական հետաքրքրասիրությունը: Դրա դրսևորման արդյունքում սուր զգացողությունների ձգտող, միայն լսածով տեղեկացված, սակայն իրականում անփորձ աղջիկները դառնում են տուժող: Նման վարքագծի հիմքում դաստիարակության թերություններն են, որոնք կապված են անչափահաս աղջիկների ինքնուրույնությունը սահմանափակելու հետ: Արդյունքում առաջին իսկ հարմար առիթով դուրս պրծնելով ծնողների հսկողությունից՝ պոտենցիալ տուժողները հաստատում են կասկածելի ծանոթություններ⁴: Հոգեվերլուծական մոտեցումների համաձայն,

քանի որ այս տարիքում դեռահասն արդեն ունի հետերոսեքսուալ սեռական հարաբերություններ հաստատելու համար անհրաժեշտ ներուժ, նա փորձում է ազատվել վաղ շրջանում սեռական բավարարման վրա դրված արգելքից: Նա պետք է իր բնագոյները լիցքաթափելու այնպիսի ուղիներ գտնի, որոնք կապահովեն հասուն սեռական հարաբերությունների կառուցման համար անհրաժեշտ բնագոյաին և հուզական ազատության առավելագույն մակարդակ: Շ.Բյուլերը սեռական հասունացումը համարում է դեռահասության ճգնաժամի պատճառ: Նա դեռահասության փուլում առանձնացնում է նեգատիվ և պոզիտիվ շրջաններ: Նեգատիվ շրջանին բնորոշ է նախկին հետաքրքրությունների կորուստը, սեճական մղման ի հայտ գալը, ինչն էլ պայմանավորում է այս շրջանի բացասական ախտանշանները՝ տագնապայնությունը, ագրեսիվությունը, լարվածությունը, անիմաստ ընդվզումը, նեգատիվիզմը և այլն: Պոզիտիվ շրջանը բնութագրվում է նոր հետաքրքրությունների, արժեքների ի հայտ գալով, դեռահասը ձգտում է մտերմիկ հարաբերությունների, արթնանում է սիրո զգացմունքը⁵:

Չի կարելի հաշվի չառնել, որ 16-18տարին այն հասակն է, երբ առաջանում է բնական հետաքրքրություն հակառակ սեռի նկատմամբ: Այդտեղ էլ դրսևորվում է բարոյական արգելքների բացակայությունը, որոնք երկար ժամանակ փոխարինված էին մակերեսային հսկողությամբ: Դրանք հասկանալի պատճառներով չէին մշակվել և բնականաբար չեն գործել ձևավորված անբարենպաստ իրավիճակում⁶:

Անձի վարքի կարևոր կարգավորիչներից է ինքնազնահատականի զարգացումը: Դեռահասության շրջանում ձևավորվում է ինքնազնահատման ունակություն ոչ միայն հեղինակավոր մեծահասակների, այլև սեփական հպահանջների միջոցով: Ինքնազնահատականի գլխավոր չափանիշն է դառնում անչափահասների և այլ անձանց փոխհարաբերությունների բարոյաիզոգեբանական ասպեկտները: Հոգեբանական վերլուծությունը ցույց է տվել տուժողի ցածր ինքնազնահատականի, կոնֆլիկտային իրավիճակում վարքի սոցիալական համապատասխանության ցածր մակարդակի առկայություն⁷: Որոշ անչափահաս տուժողներ այժի են ընկնում բարձր ինքնազնահատականով: Նրանց հատկանշական է անքննադատականությունը, խնդիրներն ինքնուրույն լուծելու ձգտումը, որը վեր է նրանց հնարավորություններից, հակվածությունը ռիսկին: Դեպքից հետո նրանք լինում են հիասթափված, ձգտում են կատարվածի համար պատասխանատվությունը դնել այլ անձանց /հանցագործի, ընկերուհու, մոր և այլն/ ու հանգամանքների վրա⁸:

Տուժողի, տվյալ պարագայում անչափահասի անձը և վարքը բնորոշող բացասական հատկանիշներից է հարբածության վիճակում գտնվելը հանցագործության կատարման պահին: Տուժողը նման վիճակի հաճախ հասնում է հենց

ապագա հանգագործի ընկերակցությամբ /մանկահասակ տուժողներին նման վիճակը բնորոշ է/՝

Բարոյականության նորմերից շեղված աղջիկների և մարմնավաճառության ուղին բռնած երիտասարդ կանանց հետազոտման ժամանակ հաճախ պարզվել է, որ նրանք դեռևս մանկության ժամանակ մեծահասակների կողմից ենթարկվել են սեռական ոտնձգությունների. Կարելի է պնդել, որ սեռական հանցագործություններից որոշ տուժողների վիկտիմոզեն վարքի պատճառներից մեկը անչափահասների և երիտասարդների, հատկապես աղջիկների սեռական լուսավորության և դաստիարակության անբավարարությունն է՝:

Տուժողի անծի և վարքագծի քրեաբանական /կրիմինոլոգիական/ նշանակության գնահատման համար կարևոր է տուժողի կողմից դիմադրության ցուցաբերման հարցը: Դեռահասներն ու անչափահասները կազմում են այսպես կոչված պասսիվ տուժողներ կատեգորիայի զգալի մասը¹¹: Այդպիսիք են այն անծինք, որոնք տարբեր պատճառներով հանցագործին դիմադրություն ցույց չեն տալիս¹²: Իհարկե, ճիշտ չէր լինի ենթադրել, որ ցանկացած անչափահաս այդ հանգամանքի ուժով արդեն իսկ օբյեկտիվորեն անկարող է դիմադրել հանցագործին: Այստեղ շատ բան կախված է ոտնձգության տեսակից, իրավիճակից, հանցագործի և տուժողի անծից: Սակայն հաճախ անչափահասներն օբյեկտիվորեն անկարող են դիմադրություն ցուցաբերել կամ ծայրահեղ դեպքում ֆիզիկապես ունակ են, բայց վտանգավոր իրավիճակը, որում հայտնվել են, հստակ չեն պատկերացնում¹³:

Դեռահասների և անչափահասների նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունների վիկտիմոլոգիական կանխարգելումը կարելի է բաժանել հետևյալ ուղղությունների.

1/ ընդհանուր վիկտիմոլոգիական կանխարգելում¹⁴, որը ներառում է.

ա/ վիկտիմոլոգիական դաստիարակությունը, որը հավանական զոհի մոտ ինքնապահպանության տեսական և գործնական հիմքերի ձևավորմանը, արտակարգ իրավիճակները հասկանալու և դրանցից խուսափելու որոշ հմտությունների զարգացմանը, իր համար նվազագույն վնասով ստեղծված իրադրությունից դուրս գալու մեթոդների ձևավորմանն ուղղված գործընթաց է¹⁵:

բ/ սեռական դաստիարակությունը, որը գործընթաց է՝ ուղղված անձնական այնպիսի որակների, հատկությունների մշակմանը, որոնք թույլ են տալիս իրականացնել սեփական սեռական նույնացումը և մշակել մարդու անհրաժեշտ վարքագիծը մյուս սեռի ներկայացուցիչների հետ հարաբերություններում կենսագործունեության բոլոր փուլերում¹⁶:

գ/ սեռական հանցագործությունների կատարման հավանական վայրերի /այգի, պուրակ, խաղահրապարակ և այլն/ պարբերաբար ստուգումը, պատշաճ

լուսավորության ապահովումը, նշված տարածքներին մոտ ոստիկանության պարեկապահակետային ծառայության երթուղիների նախատեսումը և ծառայության կազմակերպումը¹⁷, վերնահարկեր և ձեղնահարկեր /որտեղ հաճախ առանձնանում են միմյանց որպես կանոն ծանոթ անչափահաս հանցագործները և նրանց զոհերը/ մուտքի հնարավորության սահմանափակումը¹⁸ և այլն:

2/ Անհատական վիկտիմոլոգիական կանխարգելում¹⁹.

Անհատական կանխարգելման արդյունավետությունը մեծապես կախված է հանցագործներին դիմակայելու պոտենցիալ զոհի հնարավորությունների օգտագործումից: Այդ հնարավորությունները քիչ չեն միջին հասակի անչափահասների, անգամ 8-10 տարեկան աղջնակների մոտ: Խոսքը ոչ թե ավելի ուժեղ հանցագործին ֆիզիկապես դիմադրելու հնարավորության, այլ ողջամիտ շրջա-հայացության մասին է, որին նրանք որոշակի չափով տիրապետում են: Այդ պատճառով անհատական կանխարգելման աշխատանքների ժամանակ շրջա-հայացության, զգուշության որակների ձևավորումն անհրաժեշտ և նպատա-կաուղղված է: Ուս հեշտ լուծելի խնդիր չէ և կպահանջի ծնողների, մանկավարժ-ների, ոստիկանության՝ անչափահասների գործերով ստորաբաժանումների ուժերի համադրում: Ավելի մեծ տարիքի պոտենցիալ տուժող անչափահասների պաշտպանական հնարավորությունների ձևավորման կարևոր բաղադրիչներից է նրանց ներգրավումը սպորտի, ինքնապաշտպանական հնարքների ուսուցման գործընթացի մեջ: Ֆիզիկական ուժի, ինքնավստահության զարգացումը կարող է վճռական դեր խաղալ ողջամիտ վարքագիծ ընտրելու /արդյունավետ դիմադրություն ցույց տալու/ գործում:

Բոլոր առումներով բարդ է այն անչափահասների նկատմամբ անհատական ներգործությունը, որոնց անձի բացասական որակները հնարավոր են դարձնում նրանց կամավոր սեռական կապերի հաստատումը հանցագործների հետ: Նրանց նկատմամբ անհատական ներգործության առավել գործուն միջոցներ ընտրելիս պետք է հաշվի առնել

ա/ տուժողների անձի կոնկրետ բնութագիրը և տարիքը,

բ/ տուժողների նկատմամբ սեռական հնարավոր ունեցություն կատարող կոնկրետ անձի և հնարավոր քրեածին իրավիճակի մասնակիցներին կապող հանգամանքների բնույթի մասին տվյալների առկայությունը կամ բացակա-յությունը²⁰,

3/ մտահղացվող և նախապատրաստվող հանցագործությունների անհետա-ձգելի վիկտիմոլոգիական կանխարգելում²¹:

Վերջինիս իրականացման համար լուրջ դժվարություններ են առաջացնում սեռական հանցագործությունների ծագման յուրահատկությունը և տուժողի անձի առանձնահատկությունները: Նման դժվարությունների անկյունաքարն է

նախապատրաստվող կամ կատարված հանցագործությունների մասին տեղեկատվության ստացման բարդությունը, որի հիմնական պատճառը հանցագործների բնական քողարկվածությունն է, որոնք ամեն կերպ ձգտում են թաքցնել իրենց մտադրությունները, առավել ևս նախկինում կատարած հանցագործությունների դեպքերը, ինչ-պես նաև կատարվածի մասին տուժողների լուծությունը: Բացի այդ, անչափահասները հաճախ տեղյակ չեն լինում իրենց սպառնացող վտանգի մասին, մանավանդ, եթե հանցագործը նրանց բավականին ծանոթ անձ է: Այս պատճառով ոստիկանության մարմինները պետք է լայնորեն օգտագործեն իրենց տրամադրության տակ գտնվող տեղեկատվության աղբյուրները՝ չանտեսելով բռնաբարությունների, անտառակաբարո գործողությունների մասին առկա անգամ ամենաընդհանուր բնույթի տվյալները: Պասսիվ տուժողների մասին տեղեկատվություն կարելի է ստանալ քրեական գործերի վերլուծությունից, բժշկական, մանկական հիմնարկներից, բնակչությունից և այլ աղբյուրներից:

Ուսուցիչները որպես կանոն լավ գիտեն այն աղջնակներին, որոնց վարքագիծը վկայում է ինտիմ բնույթի հարցերով իրենց տարիքի համար աննորմալ տեղեկացվածության կամ, ընդհակառակը, գաղտնապահության, ընկճվածության մասին, և հազվադեպ են նրանց դիտարկում որպես սեռական հանցագործի ուշադրության օբյեկտ, մինչդեռ հնարավոր բարոյական շեղումների վիկտիմուզիական այդ կողմը պետք է առաջնահերթ հաշվի առնել՝ նշված անձանց մասին ոստիկանությանը տեղեկացնելով: Այսպիսի տվյալներ ունենալով՝ ոստիկանության աշխատակիցները կարող են մանրամասն ուսումնասիրել անչափահասների կենսապայմանները, հավաքել լրացուցիչ տեղեկատվություն նախապատրաստվող կամ կատարված հանցանքների մասին: Նմանատիպ դեպքերում կանխարգելման արդյունավետությունը կախված է ոստիկանության ու դպրոցների ճիշտ կազմակերպված համագործակցությունից:

Ոստիկանության աշխատակիցները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն անչափահասների այն խմբերին, որոնց մեջ մտնում են աղջնակներ: Եթե պարզվի, որ խմբի անդամներին կապում են հակահասարակական հետաքրքրությունները, ապա կան բոլոր հիմքերը ենթադրելու, որ այդ աղջնակները կարող են դառնալ անառակաբարո գործողությունների կամ սեռական այլ հանցագործության զոհ: Այդպիսի խմբերը հնարավորինս արագ պետք է վերացվեն ոստիկանության, մանկավարժների ու ծնողների հյամատեղ ջանքերով, ինչը կնպաստի հանցագործության կանխարգելմանը:

Սեռական հանցագործություն կատարած կամ փորձ կատարող անձանց բռնելու դեպքում պետք է պարտադիր ստուգել նրանց՝ համանման դեպքերին մասնակից լինելու փաստը: Եթե տարբեր պատճառներով չի հաջողվում նրանց ենթարկել քրեական պատասխանատվության, նրանց պետք է պահել ոստիկա-

նության տեսադաշտում: Սակայն դա դեռ բավարար չէ, եթե ընտանիքում, բնակարանում նրանց հետ համատեղ բնակվում են անչափահասներ: Սռաչ-նահերթ անհրաժեշտ է պարզել՝ այդ անչափահասները չեն ենթարկվել արդյոք նրանց կողմից սեռական ոտնձգության կամ դրա փորձին, ապա միջոցներ ձեռնարկել, որոնք կբացառեն քրեածին իրավիճակի ստեղծումը հետագայում: Միաժամանակ պետք է նախազգուշական աշխատանք տանել նաև ծնողների հետ: Վերոգրյալը հավասարապես վերաբերվում է նաև տղա երեխաների նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունների կանխարգելմանը²²:

Անչափահասների նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունների վիկտիմոլոգիական կանխարգելման մեջ ուրույն և արդի նշանակություն ունի որչեր պահելու, կավատության, վեներական հիվանդությունների տարածումը կանխելու և պոռնկության դեմ արդյունավետ պայքարի կազմակերպումը²³:

Այսպիսով, դեռահասների և անչափահասների նկատմամբ կատարվող սեռական հանցագործությունների կանխարգելման միջոցառումների կիրառումը կարևոր նշանակություն ունի: Դրանց միջոցով ոչ միայն հայտնաբերվում են սեռական հանցագործության տուժող դառնալու հավանական անձինք, ակտիվացվում են նրանց պաշտպանական հնարավորությունները, այլև հնարավորինս խոչընդոտվում է նախկինում սեռական ոտնձգության ենթարկված անձանց նկատմամբ նմանատիպ դեպքերի կրկնությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ривман Д. В. Криминальная виктимология. СПб., 2002. էջ 150
2. Дяченко А. П. Актуальные вопросы виктимологической профилактики преступлений в области половых отношений. // Виктимологические проблемы борьбы с преступностью. Сб. науч. тр. Иркутск, 1988. էջ 87
3. Исаев Н. А. Сексуальные преступления как объект криминологии. СПб., 2007. էջ 401
4. Ривман Д. В. Виктимологические факторы и профилактика преступлений. А., 1975. էջ 62
5. Խոչընդոտված սեռական հանցագործությունների կանխարգելումը. Էջ. 2004. էջ 46-47
6. Ривман Д. В. Виктимологические факторы и профилактика преступлений. А., 1975. էջ 63
7. Васильев В. А. Юридическая психология. СПб.: 2002. էջ 414
8. Васильев В. А., Мамайчук И. И. Анализ личности несовершеннолетних жертв половых преступлений. http://student.km.ru/ref_show_frame.asp?id=5BVC6A41492D4EE0B6D744F5423A7C...
9. Дяченко А. П. Актуальные вопросы виктимологической профилактики преступлений в области половых отношений. // Виктимологические проблемы борьбы с преступностью. Сб. науч. тр. Иркутск, 1988. էջ 88
10. տե՛ս նույնը, էջ 90
11. Ривман Д. В. Виктимологические факторы и профилактика преступлений. А., 1975. էջ 124

12. Малкина-Пых И.Г. Психология поведения жертвы. М.: 2006 тp 28
13. Ривман Д.В. Виктимологические факторы и профилактика преступлений. Л., 1975. тp 124
14. Исаев Н.А. Сексуальные преступления как объект криминологии. СПб., 2007. тp 400
15. Волкова Т. Виктимологическая профилактика. Требуется обучение правилам безопасного поведения. // Российская юстиция. 2003. №1. тp 69
16. Резер Т.М. Медико-социальные подходы к организации полового воспитания и сексуального образования. // Социологические исследования. 2003 №1, тp 104
17. Долгова А.И. Криминология. М., 1997. тp 381
18. Ривман Д.В. Виктимологические факторы и профилактика преступлений. Л., 1975. тp 126-127
19. Исаев Н.А. Сексуальные преступления как объект криминологии. СПб., 2007. тp 400
20. Ривман Д.В. Виктимологические факторы и профилактика преступлений. Л., 1975. тp 127-128
21. Ривман Д.В. Виктимологические факторы и профилактика преступлений. М. ВПУ МВД СССР, 1975. тp 113
22. Ривман Д.В. Виктимологические факторы и профилактика преступлений. Л., 1975. тp 125-126
23. Дяченко А.П. Актуальные вопросы виктимологической профилактики преступлений в области половых отношений. // Виктимологические проблемы борьбы с преступностью. Сб. науч. тр. Иркутск, 1988. тp 91